Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը

Դուք կարող եք Սոցիալական Ապահովության հետ ձեր հարցերը լուծել ձեր ներկայացուցիչի, օրինակ՝ փաստաբանի, միջոցով: Մենք ձեր ներկայացուցիչի հետ կաշխատենք այնպես ինչպես ձեզ հետ:

Կարեւոր լուռ՝ ձեր ներկայացուցիչը չի կարող ձեզնից դրամ վերցնել կամ գանձել՝ առանց մեր կողմից նախապես գրավոր առոնություն ստանալու: Սակայն ձեր ներկայացուցիչը կարող է ձեզանից կանխավճար ստանալ, եթե այդ գումարը աւանդում եք մի յատուկ հաշվի մէջ եւ պահում մինչեւ ձեր հարցի լուծումը:

Ինչպես դուք, նոյնպես ձեր ներկայացուցիչը պարտաւոր է մեզ ճշգրիտ տեղեկություններ տալու: Դիտակցաբար եւ կամեցողությամբ կեղծ տեղեկություններ հայթայթելը օրենքի հակառակ են: Այդ անելու դեպքում՝ դուք կարող եք բանտարկության ենթարկվիլ:

Ինչ կարող է անել ներկայացուցիչը

Ներկայացուցիչը նշանակելուց հետո, նա կարող է ձեր փոխարեն՝

- Տեղեկություններ ստանալ ձեր Սոցիալական Ապահովության հաշուեցույցից.
- Օգնել ձեզ ստանալու ձեր հիվանդության պատմությունը կամ ձեր պահանջը հիմնավորող տեղեկություններ.
- Ձեզ հետ կամ ձեր փոխարեն հաճախել մեր աշխատակիցների հետ նշանակված հարցազրույցներին, հանդիպումներին, եւ ունկնդրություններին.
- Պահանջել հարցի վերաքննարկում եւ վերատեսություն, դատաւորի կամ դատական խորհրդի կողմից եւ
- Օգնել ձեզ եւ ձեր վկաներին դատաւորի ունկնդրության պատրաստվելու եւ հարցափորձելու ցանկացած վկայի:

Ձեր ներկայացուցչը նաեւ ստանում է ձեր նամակների օրինակները եւ իմանում ձեր պահանջի կապակցությամբ լրիվ տեղեկությունները:

Ինչպես ընտրել ներկայացուցիչ

Ձեզ ներկայացնելու համար՝ դուք կարող եք փաստաբան կամ որեւէ տեղյակ անձնավորություն ընտրել: Դուք կարող եք նաեւ մեկից ավելի ներկայացուցիչ ունենալ: Սակայն ձեզ չի կարող ներկայացնել մի անձ, որին նախկինում արգիլվել ներկայացնել այլ անձ Սոցիալական Ապահովության Վարչության մոտ, կամ ըստ օրենքի, իրավասու չե ներկայացուցիչի պատասխանատվությունները կրելու:

Որոշ կազմակերպություններ կարող են օգնել ձեզ փաստաբան գտնելու կամ ձեզ անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու, եթե դուք համապատասխանում եք այն ստանալու պահանջներին: Որոշ փաստաբաններ համաձայն են վճարում ստանալ միայն ձեր նպաստը սկսելուց ետք: Սոցիալական Ապահովության ձեր տեղական գրասենյակում կա այն կազմակերպությունների ցուցակը, որոնք կարող են օգնել ձեզ ներկայացուցիչ գտնելու հարցով:

Ընկերության, հիմնարկության կամ որեւէ այլ կազմակերպության մեկ կամ աւելի աշխատակիցներ կարող են ձեր ներկայացուցիչները լինեն, սակայն ընկերությունը, հիմնարկությունը կամ կազմակերպությունը ինքնին **չի կարող** ձեր ներկայացուցիչը լինի:

Ներկայացուցիչ ընտրելուց հետո՝ դուք պետք է մեզ անմիջապես **գրավոր կերպով** տեղյակ պահեք: Այդ անելու համար՝ վերցրեք SSA-1696-U4՝ *Appointment of Representative* (*Ներկայացուցիչ Նշանակելու դիմումնագիրը*) մեր կայքէջից, ***www.socialsecurity.gov*** կամ Սոցիալական Ապահովության որեւէ գրասենյակից:

Դուք պետք է հայտնեք մեզ այն անձի անունը, որ նշանակում եք որպես ձեր ներկայացուցիչը եւ ստորագրեք այն թուղթը: Եթե ձեր ներկայացուցիչը փաստաբան **չե**, նա պետք է գրավոր կերպով նշի իր անունը եւ ստորագրի նոյն դիմումնագիրը ընդունելով այդ նշանակումը:

Ի՞նչ վճարում կարող է պահանջել ձեր ներկայացուցիչը

Իր ծառայությունների փոխարեն վճարում ստանալու համար՝ ձեր ներկայացուցիչը նախ պետք է մեզ վճարման համաձայնագրություն կամ վճարման խնդրագիր ներկայացնե:

Ձեր ներկայացուցիչը **չի կարող** ձեզանից պահանջել մեր վավերացրած գումարից ավելի: Եթե դուք կամ ձեր ներկայացուցիչը համաձայն չեք մեր վավերացրած գումարի հետ, դուք կամ նա վերաքննություն կարող եք խնդրել:

Եթե ձեր ներկայացուցիչը գանձում է մեր վավերացման գումարից ավելի , կամ հարկ եղածից շատ ավելին է պահանջում, մենք կարող ենք նրան արգիլել այսուհետեւ ներկայացնել որեւէ մեկին Սոցիալական Ապահովության Վարչության մոտ: Բացի այդ, նա կարող է բանտարկության ենթարկվիլ:

Ներկայացնել վճարման համաձայնագրություն

Եթե դուք եւ ձեր ներկայացուցիչը գրավոր համաձայնագրություն եք կնքել վճարման մասին, ձեր ներկայացուցիչը կարող է վավերացում խնդրել որեւէ մի ժամանակ՝ ձեր պահանջի որոշման ընթացքում: Սովորաբար մենք վավերացնում ենք համաձայնագրությունը եւ գրավոր ձեւով հայտնում ձեզ, թե որքան վճարմունք կարող է ստանա ձեր ներկայացուցիչը, եթե՝

- համաձայնագրությունը ստորագրված է ձեր եւ ձեր ներկայացուցիչի կողմից.
- ձեր պահանջն ընդունվում է եւ որոշվում է ձեզ վճարել սպասման ծամանակի ընթացքում հաւաքված նպաստը եւ

(շրջել)

- համաձայնված գումարը չի գերազանցում ձեր հաւաքված նպաստի 25 տոկոսը կամ 5,300 դոլար՝ որը որ ավելի քիչ է:

Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը

Եթե մենք չվավերացնենք համաձայնագրությունը, մենք գրավոր կերպով տեղյակ կը պահենք ձեզ եւ ձեր ներկայացուցչը, որպէսզի ան խնդրագիր ներկայացնէ:

Ներկայացնել վճարման խնդրագիր

Իր ծառայությունների փոխարեն վճարում ստանալու համար՝ ձեր ներկայացուցիչը կարող է մեզ վճարման խնդրագիր ներկայացնել: Այդ գրավոր դիմումի մեջ պետք է մանրամասնորեն նշվի, թե ձեր ներկայացուցիչը որքան ժամանակ է տրամադրել իր մատուցած յուրաքանչյուր ծառայության համար: Ձեր ներկայացուցիչը պետք ձեզ տա վճարման խնդրագիրը եւ դրա հետ կցված յուրաքանչյուր ծախսերի փաստաթուղթը: Եթե դուք համաձայն չեք պահանջվող գումարի կամ նշված տեղեկությունների հետ, տեղյակ պահեք մեզ 20 օրվա ընթացքում: Մենք կուսումնասիրենք ու կը որոշենք ներկայացուցիչի ծառայությունների արժեքը եւ կը հայտնենք ձեզ մեր վավերացրած գումարը:

Որքան եք դուք վճարում

Սոցիալական Ապահովության կողմից վավերացած գումարը միայակ հատուցումն է որ ձեր Ներկայացուցիչը պետք է ստանա՝ իր ծառայությունների համար, նոյնիսկ եթե դուք որոշել եք նրա ավելի վճարել: Սակայն ձեր ներկայացուցիչը կարող է նաեւ, առանց մեր վավերացման, ձեզանից դրամ գանձել անձնական այլ ծախսերի համար, օրինակ հիվանդության փաստաթղթեր ստանալու համար:

Եթե ձեզ փաստաբանն է ներկայացնում (կամ մի այլ ընդունելի անձ), մենք սովորաբար ետ ենք պահում ձեր հաւագված նպաստի 25 տոկոսը (բայց ոչ ավելի): Մենք այդ գումարից վճարում ենք փաստաբանին եւ ձեզ ուղարկում մնացած գումարը:

Երբեմն անհրաժեշտ է որ դուք ուղղակի վճարեք ձեր ներկայացուցչին: Դա կարող է լինել հետեւյալ դեպքերում.

- Դուք պետք է վճարեք տարբերությունը եթե մեր ետ պահած գումարը (ձեր հաւագած նպաստներից) աւելի պակաս է քան մեր վավերացուցած կամ փաստափանին վճարած գումարը,
- Դուք պետք է վճարեք ամբողջ գումարը, եթե՝
  - — Մենք ուղղակի չենք կարող ձեր ներկայացուցիչը վարձատրել.
  - — Սպասման շրջանի հաւագված գումարից (նոյնիսկ Լրացուցիչ Ապահովության Եկամուտից) 25 տոկոսը ետ չենք պահած. կամ
  - — Ձեր փաստաբանը ժամանակին դիմել է մեզ վճարվելու համար, բայց մենք ձեզ ենք ուղարկել այն գումարը, որը պետք է պահէինք եւ վճարէինք նրան:

Դուք նաեւ պետք է վճարեք ձեր ներկայացուցիչի անձնական այլ ծախսերը՝ օրինակ հիվանդության փաստաթղթեր ստանալու համար վճարված ծախսերը:

Եթե այլ անձ է վճարում ձեր ներկայացուցիչին

Եթե նոյնիսկ ձեր փոխարեն որեւէ այլ անձ է վճարելու ձեր ներկայացուցիչին (օրինակ՝ ապահովագրության ընկերություն), մենք պետք է վավերացնենք վճարվելիք գումարը, բացի այն դեպքերում եթե՝

- դա շահ չհետապնդող կազմակերպություն է կամ դաշնակցային, նահանգային, կոմսային կամ քաղաքային գործակալություն է, որը վճարվելու է պետական գանձարանից և
- Ձեր ներկայացուցիչը մեզ գրավոր կերպով տեղյակ է պահում, որ դուք ոչ մի վճարում չեք կատարելու:

Եթե դուք վերաքննության դիմում եք անում դաշնակցային դատարանում

Դատարանը ձեր փաստաբանի համար պատշաճ գումար կը վավերացնի: Սովորաբար այդ գումարը չի գերազանցի դատարանի որոշման հետեւանքով ապահովուած նպաստի հաւաքված գումարի 25 տոկոսը: Դատարանում կատարած իր ծառայությունների համար ձեր փաստաբանը դրանից ավելին չի կարող պահանջել ձեզանից:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մեն կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցեք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշեք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10075-AM
Your Right To Representation (Armenian)
June 2005